ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/19

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Լ. Հայրյանի (լիազորագիր, տրված՝ 01.04.2019թ.)

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝

Գ. Հուրոյանի (լիազորագիր, տրված՝ 06.05.2019թ.)

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «ԼԵՎ» ՍՊԸ-ի կողմից 30.04.2019թ. ներկայացված և 30.04.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/19 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «ԼԵՎ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԼԵՎ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.04.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) արդյունքում հաղթող է ճանաչվել «ԼԵՎ» ՍՊԸ-ն: Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Ընկերությունը վերահսկվող եկամուտների գծով ունի 258 000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որի պատճառով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Ընկերությունը հայտնել է, որ եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից վերահսկվում է դրոշմանիշային վճարները, ինչպես նաև ԱԱՀ-ն, շահութահարկը, եկամտահարկը, ուրեմն հարկային տեսչությունը պարտավոր էր Ընկերության միասնական հաշվում եղած 15 990 006 ՀՀ դրամ գումարից հաշվանցել վերը նշված պարտքի գումարը: Այսպիսով՝ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը և զգուշացնել, որ Ընկերությունն ունի դրոշմանիշային գծով պարտավորություն, որի մասին Ընկերությունը չգիտեր, որ դա կամավոր պարտադիր է: Ընկերությունը կարող է իր հաշվին բանվորների և վարպետների փոխարեն վճարել, եթե ժամանակին զգուշացվեր: Ընկերությանը զգուշացրել էին, որ 2019թ. պարտադիր է և փոխանցվել է առաջին եռամսյակի գումարները: Շահութահարկի հաշվետվությունը Ընկերությունը ներկայացրել է 15.04.2019թ. և վերջինիս հայտնել են, որ 17.04.2019թ. Ընկերությունն ունի շահութահարկի պարտ 169 000 ՀՀ դրամ, որը նույն օրը փոխանցվել է պետական բյուջե: Ընկերությունը հայտնել է, որ բոլոր հարկատեսակների մասով ունի գերավճար:

Ընկերությունը բողոքով խնդրել է դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը և «ԼԵՎ» ՍՊԸ-ին ճանաչել հաղթող:

«ԼԵՎ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին սահմանված կարգով ներկայացրել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 06.05.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ արձանագրվել է ժամկետանց պարտավորություն, ուստի Ընկերության հայտը մերժվել է:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/19 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 15.04.2019թ. հայտ է ներկայացրել «ԼԵՎ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 22.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԼԵՎ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 258 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ԼԵՎ» ՍՊԸ-ի կողմից 30.04.2019թ. ներկայացված բողոքը՝ կից

փաստաթղթերով, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային

օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: ***<u>Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:</u>*** Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով 15.04.2019թ. հայտ ներկայացրած «ԼԵՎ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված

որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 22.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԼԵՎ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 258 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԼԵՎ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/29» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած ***հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ <u>անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:</u>***

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ «ԼԵՎ» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը հանդիսանում է իրականությանը չհամապատասխանող, քանի որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

Նման դեպքերում գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ և առաջնորդվել Կարգի 44-րդ կետի պահանջներով, քանի որ նշված կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից հիմք է ընդունվել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված կարգով

տրամադրված եզրակացությունը՝ Ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքում նշված այն պնդմանը, որ Ընկերությունը տեղեկացված չի եղել դրոշմանիշային վճարի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ հանդիսանալու վերաբերյալ, ապա հայտնում եմ, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն դրոշմանիշային վճարը ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որը «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա հանդիսանում է հարկային եկամուտ և հիմք ընդունելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ Ընկերության միասնական հաշվում առկա գումարից պետք է հաշվանցվեր դրոշմանիշային գծով պարտավորությունը, ապա հայտնում եմ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն համապատասխան գրությամբ հայտնել է, որ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն դրոշմանիշային վճարը վճարվում է պետական բյուջեի համապատասխան գանձապետական հաշվեհամարին, որը ՀՀ հարկային օրենսգրքի միասնական հաշվի դրույթներում ներառված չէ, ուստի միասնական հաշվում առկա ավել գումարից ինքնաշխատ հաշվանցում հնարավոր չէ իրականացնել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «ԼԵՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԼԵՎ» ՍՊԸ-ի կողմից 30.04.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**